

պիտի հին սովորութիւն երբէք չտեաք է թողնուի մինչև որ մի լուրջ առիթ ու պատճառ չլինի:

Ընթերցողը երևի այն համոզման եկաւ զիրը ստածներինց: Թէ այժմ «լուրջ առիթ» ու պատճառ կայ տամարի մի մեծ անցարմարութիւնը վերացնելու համար: Թէ ոչ միայն ժամանակ է գրիգորեան տամարը հասարակական դարձնել այլ և նաեղագոյն սահմանի մէջ գնել զատկական ածնի խիստ արձակ շարժականութիւնը:

Զատկական ածնի համար զանազան կանոններ են առաջարկուել: Թերեւս աւելի յարմարագոյնը սեպուի հետեւեալը զատկական կիրակի է զարնանամուտի երրորդ կիրակին: Այս հաշուով տարագոյն՝ զատկական ածնը կը պատահի միայն ապրիլի 4-ից մինչև ապրիլի 11-ի միջոցներում: և ուրեմն այժմանից հինգ անգամ նուազ չափով շարժական կը լինի: Ներկայ խորհրդածութիւնը համառօտելով առաջ բերինք որպէս զի մենք անպատրաստ չգտնուինք մեր դիրքը որոշելու: Երբ որ կարգը մեզ էլ հասնի:

Ս. Մ.



ԼԵՒՈՆ ԺԳ-ի

ՈՒՍՈՒՍԻՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ:

ԱՅԺՄԵՆՆ պապի կենսագրութիւնը շատ անգամ գրուել է: Բայց մեծ մասով այնպէս որ նորա վաղագոյն հասակը նկարագրուել է որպէս հրաշալի մանկութիւն և աղագայ կենաց հանձարեղութեան: սրբութեան և մեծութեան կանխագոյն առհաստէնայ: ուր ուրեմն հասկանալի պատճառով՝ ստոյգ պատմութիւնն ու առասպելեալ զրոյցը խառնաշփոթութեամբ իրար մէջ հիստուել են: Երգ հրատարակուել են նորա ձեռքով գրած իւր կենաց 8-ից մինչև 28 տարուայ հասակի նամակները: որով անշուշտ աւելի ճիշդ պատկեր կարելի է ստանալ կաթողիկոսութեան նշանաւոր հայրապետի մասին: Ինչպէս և իրօք այդ հիման վերայ նոր կենսագրական գրքեր են հրատարակուել:

Ֆրանսիերէն և գերմաներէն լեզուով: Հետեւեալ նկարագիրը մենք քաղում ենք Beilage zur Allgemeinen Zeitung-ի հաղորդած տեղեկութիւններից:

Լեւոն ԺԳ-ը, որ մանկութեան ժամանակ Վինչենչ կամ Նինո Պէշչի էր կոչւում: ծնուել է 1810 թ.-ի մարտի 2-ին Վարպենտինոյում: Մինչև 8 տարեկան հասակը մանուկը ծնողների ձեռքի տակ անուեցաւ խիստ կաթողիկական և պապական կրօնաւորութեան ոգով: Այնուհետև Նինոն և իւր եղբայր Զուգէպոն յանձնուեցան Ճիզուիտների կրթութեան: Այսպէս նորա երկուսը 1818-ին մտան Վիտերբոյի դպրոցը: որ մի քանի տարի ասաջ Ճիզուիտները վերստին բանալու թոյլտուութիւն էին ստացել ազնուականների դուստները կրթութեւ համար: Ուրեմն փոքրիկ Նինո Պէշչի առաջին ուսուցիչները Ճիզուիտներ էին: և դարձեալ նորա կրթեցին նորան: մինչև որ նա դպրոցն ու համալսարան էր յաճախում: և հոգեւորապէս այնուհետև ևս շարունակեցին նորան առաջնորդող մտալ: վասն զի նորա իրանց հոգեկան նշանը խոր գրոշմել էին նորա անձնաւորութեան և նորա բնաւորութեան վերայ:

Պէշչին Վիտերբոյում մնաց 6 տարի ստորին դիմնագիական դասընթացը աւարտելու համար: Նա ի մանկութենէ անօրինակ քանասէր և ուշիմ աշակերտ էր: արդէն 12 տարեկան հասակում պարզեարաշխութեան ժամանակ ստացաւ պապի պատուիրակներից քանասիրութեան համար գովասանութեան պսակ: որին յետոյ ուրիշ շատ պատիւներ ևս յաջորդեցին մինչև որ իւր ուսումը շարունակուեցաւ: Նմանապէս այստեղ երեւցաւ նորա մեծ սէրը լատինական քերթողութեան համար և իւր բանաստեղծական ընդունակութիւնը: Երբ որ կարգապետ Վինչենչ Պաւանին դպրոցը այցելութեան եկաւ: երկուսսանամեայ Վինչենչ (Նինո) Պէշչին իւր արուեստի գեղեցիկ փորձը տուեց հետեւեալ տողերով:

Ինչպէս որ քեզ, Պաւանի-դ, մկրտելիս Վինչենտիոս կոչեցին:

Ես անարժան Պէշչի-ս՝ ի մանկութենէ նշնայեալ կոչուեցայ:

Նրանի թէ ես, Պէշչի-ս, այն առաքնութիւններն էլ ստանայի:

Որով երբեմն դու, ի՞նչ Պաւանի, մեծապէս առաքինացար:

Բայց այսքան մտաւոր ձիւրքերի հետ՝ մանկան մտաղ հասակում մարմնի տկարութիւն երեւցաւ: որ շատ անգամ ստիպում էր նորան մահճի մէջ պատկած մնալ:

Վիտերբոյի դասընթացը աւարտելուց յետոյ 1824-ին Պէշչի եղբայրները մտան Collegium Romanum դպրոցը: որ Լեւոն ԺԳ-ը նոր յանձնել էր

ճիգութեան փորձութեան: Մեր գիժնադիտներն փերջընթեր գասարանին են համապատասխանում այն դպրոցի մարդկական ուսմանը և ճարտասանութեան դասընթացները: Այս տեղ Նինոն ոչ միայն պատկերներ ստացաւ այլ արժանացաւ յատուկ գերազանցութեան որ հրաման ստացաւ ուսանողների և ուսուցչապետների առաջ լատիներէն ճառ խօսել: Ընտրան ունենալով «հեթանոսական և քրիստոնէական Հոգովի համեմատութիւնը», 1825-ին նա սկսեց փիլիսոփայութեան երեքամեայ ուսումը: որ համապատասխանում և մասամբ աւելի ևս վեր է: քան մեր գիմնադրական վերջին դասարանը: «Տրամաբանութեան և մաթեմատիքի մաշեցնող ուսումը» արգելք էին լինում նորան, ինչպէս ինքը գրում է: որ առաջուայ պէս շուտ շուտ թղթակցէր իւրացիների հետ: Աւսման երկրորդ տարուայ վախճանին հասաւ քննադանցութեան խնդիրների մասին հրապարակաւ փիճարանելու պատուին: իսկ վերջին տարին առիթ տուեց նորան աւելի խոր ուսումնասիրելու քննական գիտութիւնները: «Հիմա իմ միտքը զարթել է մաթեմատիքի դժուար հաշիւների կողմը: Այս ուսումնասիրում եմ այն օրէնքները որ աստուածային իմաստութիւնը ֆիզիքական բնութեան մէջ մարմիններին յատկացրել է: Քիմիայի մէջ դիտում եմ քննական երեւոյթները: Աստղաբաշխութեան մէջ չափում եմ մոլորակների և արեգակնային գնդի հեռաւորութիւնները: կամ սքանչանում եմ նոցա ծրի անհունութիւնը և նոցա կանոնաւոր թաւալման փառաւորութիւնը իմանալով: Բայց ութուտանալու պատանուն ուսմանց հետ ի միասին հետաքրքրում են նաեւ աշխարհքի մէջ կատարուող նորութիւնները: նա աննկուն եռանդով նամակների մէջ յիշատակում է քաղմաթիւքաղաքական և եկեղեցական իրողութիւններ: որոնք կարող էին: ըստ իւր կարծեաց: հետաքրքրական լինել իւր ընտանիքի համար: Այսպէս նա շատ մանրամասնութեամբ նկարագրում է Լեոն ԺԳ-ի մահը: Այս պային նա պաշտում էր վերին աստիճան: որովհետեւ իւր ուսման մէջ մայելում էր նորա խրախոյան ու քաջալերութիւնը: և այդպէս խոր պաշտելու մի նշան էլ այն էր: որ ինքն էլ Լեոն անուն տուեց իրան: երբ որ պապ զարձաւ: Հարունակելով միշտ առաջին միջանակներ ոտանալ զանազան ուսմունքների համար: նա աւելի մեծագոյն պատուի պէտք է արժանաւոր փիլիսոփայութեան և քննադատութեան եռամեայ դասընթացի վախճանին: նա պէտք է բարձր հոգեւորականութեան՝ թերեւս նաեւ պապի ներկայութեամբ հրապարակաւ փիճարանէր փիլիսոփայութեան խնդիրների մասին: Այդպիսի մրցութեանը պատրաստուելու համար: այս անգամ հրաժարուեցաւ իւր ամառային արձակուրդը ըստ սովորութեան կարպենտինոյում անցուցանելուց: «Ստացած ծանօթու-

թիւնների փորձը: որ հայր ճիգութեան և առաջարկութեամբ ևս պէտք է մատուցանեմ: անշուշտ մեծ փառք ու պատիւ պիտի բերէ նորընծայիս և իմ տոհմին: եթէ յաջողութեամբ պատկուի: Եւ որովհետեւ ևս այս գործին խիստ լուրջ եմ՝ վերաբերվում: կամենում եմ՝ լաւ պատրաստուելու համար՝ չգաղարեցնել ուսումնասիրութիւնս: Այս պատճառով անհրաժեշտ է: որ արձակուրդիս մի մասը պստեղ անցուցանեմ: Եթէ ժամանակից առաջ կարպենտինո գամ: հարկաւ այդ կէնին մի առիթ: որ դրսանքներից մաքերս ցրուին և մէն մենակ մնամ: առանց առաջնորդութեան: մինչդեռ այստեղ դժուարութեանց հանդիպելիս բարի խորհուրդ կարող եմ ստանալ: Սակայն փիճարանութիւնը խափանուեցաւ: որովհետեւ ուսմամբ շատ զբաղուելուց նա ծանր հիւանդացաւ: Բայց և այնպէս նա իւր եռամեայ քանասիրութեան պատուների փայլումից իսպառ չպէտք է զրկուէր: Collegium Romanum-ը խիստ պատուաւոր վկայական տուեց նորան՝ իբրեւ «մեծամեծ յոյսեր խոստացող պատանուն»: թէ նա «յաջողակ համարուեցաւ 1829 ուսումնական տարուայ վախճանին հրապարակական փիճարանութեան մէջ փիլիսոփայութեան խնդիրներ պաշտպանելու: Բայց թէ իւր հիւանդութեան պատճառով նա հնար չունեցաւ գործը ի կատար ածելու»:

Այնուհետեւ սկսեց բուն աստուածաբանութեան ուսումը: Բայց այնպէս որ ոչ միայն բնաւ ժամանակ չէր ունենում իւր սիրած բանաստեղծութեամբ պատաղելու: այլ և այդպիսի «շնչենկեր»ների յօժարութիւնն անգամ սառեց իւր մէջ: նա երբորը գրում էր: «Հոռապիւր այդ ծաղիկների բեռից (բանաստեղծութիւնից) ազատուելու: Սակայն յետոյ զարթեալ նորա մէջ կենդանացաւ իւր մանկութեան աշխոյժը և նա հաւատարիմ՝ մնաց բանաստեղծական արուեստին: Դաւանարանութեան մէջ երկու պսակ ստացաւ: «Թէ ինչ դժուարութիւններ պիտի յաղթէի: մինչև որ այդ պսակները ստացայ: հարկ չեմ համարում երկարել: Դաւանարանութիւնից յետոյ կարգը հասաւ եկեղեցական պատմութեան: որ նա ամենայն եռանդով ուսումնասիրում էր: «Այս տեղ պէտք է անգուշ աշխատել և ճիգ թափել: չգանդաղիլ և միշտ ընթանալ առաջ: առաւօտուանից մինչև գիշերը: Եթէ աստուածաբանութիւնը յաջողութեամբ ուսանեմ: ասում է վարժապետս: ապահովապէս կը հասնիմ ամէն բանին: ինչ որ խոհեմարար ցանկամ»:

1830-ին զարձեայ մեծագոյն պատուի արժանացաւ: աւագագոյն հոգեւորականների և ուսուցչապետների մեծ քաղմութեան առաջ՝ նա պէտք է պաշտպանէր եկեղեցական խորհուրդներին վերաբերեալ պաշարը: Աստուածաբանական հանդիսի արձանագրութեան մէջ յիշատակուած է այս փիճա-

բանութիւնը և մեծամեծ գովեստներով նկարագրուած է այդ տեղ երեւան ելած Պեչնիկի հիմնադրութեան հիմնադրութիւնը։ Աւրիտասարդ փիլա-
բանողը այնպիսի համոզմանց ազդեցիկներ տուաւ որով յայտ յանդիման երեւցաւ նորա աւելի բարձր աստիճաններին հասնելու ընդունակութիւնը։ Իւր ճիգովս ուսուցիչների և մասնաւորապէս այդ ուս-
տի կարգապետի յանձնարարութեամբ՝ նա նշա-
նակուեցաւ Collegium Romanum-ի կրկնիչ վարժա-
պետ։ Աշխատութեան ծանրութիւնը և առժանեղի
տրնութիւնը մի ամբողջ տարի հիւանդութեան
մահճի մէջ պահեցին նորան։ Բանաստեղծութեան
սէրը կրկին նորոգուեցաւ նորա մէջ և 1832-ին իւր
խնդրանքը ընդունուեցաւ Accademia degli Arcadi բա-
նասիրական ընկերութեան մէջ։ Այս հանգամանքը
իւր հօրը ծանուցանելով Պեչնիկի նամակի մէջ մերկա-
նում է նաև իւր ընտրոշ յատկութիւններից մէկը
իւր փառասիրութիւնը, որ այնուհետև կենաց միւս
տարիներում իւր մէջ աւելի և աւելի զօրացաւ,
նա այնպէս էր ձգտում ապահով խշխանութեան և
մեծութեան արշաւանքներ անելու որ նոյն իսկ
գրականական փառքն ու բանաստեղծական ար-
ուեստի փոխը լոկ իրրեւ նպատակի միջոց նկա-
տեց։ «Arcadia-ի հովիւ լինիլը ինձ փառք է բերում
և անհրաժեշտ է իմ կենաց ասպարիզի համար,
ուր ես առաջին քայլեր եմ գործում»։ 1832-ին
աւարտեց աստուածաբանական ուսումը։

Այսպէս էր նորա կենաց և շորեքտասնամեայ
ուսման արտաքին ընթացքը։ Իսկ եթէ ուզենանք
իմանալ թէ նորա նամակները ինչ պատկեր են
ձեւացնում իւր ներքին զարգացման, իւր հոգեկան
և մտաւորական կենաց նկատմամբ, թէ նոր խմոր-
ուող երիտասարդի սիրտը ինչպիսի նպատակներ և
ինչպիսի իդէալներ էին կենդանացնում, — պատաս-
խանք՝ այն կլինի. թէ շատ աւելի անբաւարար և
շատ աւելի անբաւար էր քան ինչ որ մենք յուսալ
կարող էինք այնպէս ժրաջան և շնորհունակ երի-
տասարդից, Նու այս բանի պատճառը ոչ այնքան
նորա անձի մէջ է, որքան այն հոգեկան ուղղու-
թեան մէջ, որով նորան կրթել են։ Նորա հանձա-
րը փող մանկութիւնից նեղ և անձուկ ճանապար-
հով մղեցին և շարունակ մէջը պահեցին։ Իւր սնած
միջոցորարը բացէ ի բաց խիստ ճիղուխտական
կամօղիկական էր. իրան աւանդած դաստիարակու-
թիւնը ամէն կերպ զգուշանում էր հետու պահել
նորան ժամանակակից ոգու շնչից, իսկ այս բանի
երաշխաւոր կարող է լինել արդէն նորա դաստիա-
րակիչների անձնաւորութիւնն ու կրթելու փոր-
ձուած եղանակը։

Նորան ի մանկութենէ սորվեցուցին ժամա-
նակակից ճիգովստականութեան բարեգաւառութիւնը,
որ ծագում է ոչ թէ բնական կրօնական զգացու-
թից, այլ զբարի պատուաստով և արտաքին հեղինա-

կութեամբ բուսցրած հաւատքից, նա ամենպէս
ջանքով կատարում էր ճիգովս հայրերի բոլոր
կրթութիւնները և նորա նամակները վկայում են
թէ ուսման շարունակութեան ժամանակ իւր կրած
հոգեւոր կեանքը՝ բնական-կրօնական զարգացման ծը-
նունդ չէր, այլ ամենորիայ հրահանգաց արուեստա-
կան պաճուճանք։ Անշուշտ եսմենաստանական հա-
սակի համար կատարեալ կրօնական այլանդակու-
թիւն է, եթէ նա իւր քերի Անտոնիոյին այսպէս
է գրում։ «Օգտուեցէք ամառանոցի կեանքից միթէ
հաճելի չէ խնդութեանց զրօսանքներում յիշել
թէ ժամանակը փախչում է և անոր ժամերից ոչ
մէկը չի վերադառնայ և թէ մահը արագ արագ
հասնում է հսկայական քայլերով։ Գարձեալ նոյն
կերպի դաստիարակութեան պատու է նրա տեսնում,
որ նա շատ փող սկսեց ու հաղորդութեան յաճա-
խել, երբ որ հազիւ թէ կարողութիւն ունենար
այդքան բարեպաշտութիւն արտայայտել — աղատ և
անկախ կերպով, ճիղուխտների յարատեւ ազդեցու-
թեան ներքոյ գտնուելով՝ նա չէր կարող համեղ
խնքնաւոր կրօնական զգացման, իսկական հոգեւոր
կենաց, նա պէտք է միշտ միայն կրկնէր բերանով
և արարողութեամբ այն ամէնը, ինչ որ իրան պատ-
ուիրում էին հաւատալ։ Այս բանը յայտնի երեւե-
ցաւ երբ որ իւր կրտսեր եղբոր մահուան լուրն
առաւ։ Ցրամութիւնը շատ խորն էր և իւր նամակ-
ներից երեւում է, որ բացի ուսման զեգերելուց՝
նա շատ ու քիչ սրտի և մտքի կեանքով էր աղ-
րում։ Սակայն որքան որ մեծ և անկեղծ էր իւր
հոգեկան վիշտը, աւելի ևս սրաղ երեւեցաւ իւր
կրօնական կաշկանդութիւնը, որ նա չէր կարողա-
նում իւր զգացումներով խօսել, այլ իւր ասելիքը
սերտած աղօթագրքից էր օրինակում, կամ որ նա
իւր անհատական սրտի ցաւն ու փղձուկը՝ Պակե-
րեւանի և Ամբրոսիոսի հատուկոր զկայութիւն-
ներով էր արտայայտում։ Այս ազանցուց է, թէ
նա եկեղեցական մակացութիւններով և բարեպաշ-
տական կրօնով լաւ հրահանգուած էր, բայց ան-
շուշտ նշան է և այն բանի, թէ այսպէս քաղած
և քերան առած այլոց իմաստութիւնները՝ արդէն
ճնշել էին նորա մէջ անձնական մտածութիւնը,
սեպհական զգացման արտայայտութիւնը, ազատ և
անկախ սրտի հաւատը, որ ամենպէս քառամեղ
աստուածաբանի իսկական կնիք և զրոյժ պէտք է
լինի։

Ինչպէս որ ստացած դանդաւան մեծարանքներ
և պատիւներ հաստատում են, տարակոյս չկայ,
թէ նա եղիլ է շատ ընդունակ և շատ ջանասէր
աշակերտ, որ բոլոր ուսմանքներում կարողացել է
ամենից աւելի գերազանց հանդիսանալ։ Ուստի և
աւելի զարմանք է պատճառում ընթերցողին, որ
այդ մանկութեան նամակները շատ քիչ կամ զրե-
թէ ոչինչ չեն ծանուցանում նորա ներքին հոգե-

կան կենաց մասին: Մենք միշտ միայն այն ենք լսում: Թե նա աշխատել է և թե որչափ է աշխատել, րայց գրեթե ամենևին չենք իմանում: Թե ուսումը իր վերայ ինչ կողմից աւելի խոր է աղղել: Մենք զոր օր, շատ անգամ լսում ենք, որ Թովմաս Աղաթնացին իր ուսումնասիրութեան կենդրոն է դարձել, թե նա Թովմասին խիստ բարձր է դասում: Բոլոր աստուածաբանների մեծ վարդապետ է կոչում: և այս հիացումը մինչև իր ծերութեան հասակը երբէք չթուլացաւ: Իսկ թե Թովմասից սովորածը նա ինչպէս է մշակել իր մտքի մէջ, թե այն ուսումը ինչ խորհրդածութիւններ է ծնել նորա մէջ, այս մասին մենք ոչինչ չենք իմանում: Նոյն իսկ այն նամակներից, որ նա գրել է իր եղբորը—Նոյնպէս մի ճիշդ խոսիմ, որ բնական ամենատարակից մերձաւոր խորհրդակցին: Ոչ աղաքէն և իրաւորական մտքերի սերտ փոխանակութիւնից պէտք է իմանայինք, թե նորա միտքն ու սիրտը որ ուղղութեամբ է սլմափուել և որ կողմով ծննդական դարձել: Քանի որ նորա ուսումը շարունակուել է, իր նամակներից մի նշան անգամ չենք տեսնում: Թե իրան աւանդած վարդապետութիւնն ու գիտութիւնը երբ և իցէ անձամբ և աղատորէն կշռադատած և ի հիմանց քննած լինէր: Ասակած չկայ, թե նա շատ է աշխատել, սակայն թուում է: Թե իր մտաւոր գործունէութիւնը սղունդի պէս լոկ միայն կրաւորական ընդունորան է եղել և ոչ թե բնականոր գործարան: Իսկ ճշմարիտ մեծահամբանների և յատկապէս գիտութեան համար անկողնաւորների մանկութեան նամակների մէջ՝ միշտ պատահում ենք իրանց յորդորող ուսումնական իդէալները և այնքան հարուստ մտաւոր աշխարհք, որ շարունակ զարգանում: աճում է և արգիւնաւոր է հանդիսանում: Պէշչին այս բոլորից խալաւ թափուր է: Երկրորդ նա մեծ ուսումնական պաշար է քաղել մի նեղ սահմանափակ շրջանից, որ իրան աւանդուել է որպէս հեղինակաւոր ճշմարտութիւն: Բայց նորա նամակները չեն վկայում, թե նա երբ և իցէ ինքնուրոյն ազատ հոգեկան կեանք է ունեցել՝ թե մասնաւորապէս կրօնական բաժնում և թե ընդհանրապէս գիտական մակացութիւններում: Իւր սովորածը միայն մի բազմուսումնութիւն էր խիստ կաշկանդուած ձևերի հոգով, և ոչ թե ազատ գիտութիւն: որ ինքնաբերապէս հոգեկան խորամտութեան և շարունակ բնականաւորութեան զարկ տալու ոյժ ունենար: Ինչ որ նորան ուսուցանում էին, աւանդում էին որպէս անխախտելի հեղինակութիւն: Մտաւորական ձևով իրան մատուցածները նա ամբողջապէս ամբարում էր որպէս հաստատուն գանձ: ուրմն կարօտութիւն չէր զգում: որ այն բոլորը իբր կշռադատէր, այն գանձին իւր խելքով տիրանար և ամենայն ինչ իւր ոյժերով վաստա-

կէր: Այդ բոլորը նորա համար էին և պէտք է լինէին բացարձակ ճշմարտութիւններ՝ առանց անձնական հետազոտութեան կարօտելու: Աւսումը և ներքին ջանքերով մարդկային հագու լիակատար վերանորոգութիւնը՝ այնքան երկու տարբեր բաներ են, ինչպէս ամբարած շատուսումնութիւնը և կենդանի գիտութիւնը: Նա հեղինակութեան սկզբնամբ առաջնորդուած գոյով՝ հենց սկզբից իւր ուսման ընթացքը այնպէս սեղմեց նեղ շաւղի մէջ, որ այլ ևս երբէք զօրա չեկաւ արձակ տեղը: Լեւոնի կենսագիրներից մէկն ասում է: Թե նորա ուսման ընթացքը մի անխոտոր ուղիղ ճանապարհ էր, որ ոչ ձախ և ոչ աջ կողմից, ոչ իրանից և ոչ դրանից բնականաբանուեցաւ: այս նշանակում է: Թե այդ ուսման ընթացքը խոր հոգեկան կեանք չի տաացել, այլ եղել է հոգւոյ վաղորդ բարուրումն: հոգով մեկան-ճիշդութեան ուղղութեամբ ձեացած՝ Պրոկրոստեսի մահճի մէջ, որ ահ ու զօրով զգուշացել է: Թե մի դուցէ ժամանակակից գիտութեան և քաղաքակրթութեան վաղորդոյն շունչն անգամ վարակէ սանին: Ընթերցողի վերայ տարօրինակ տպաւորութիւն է գործում, երբ որ 20-ամեայ պատանու նամակների մէջ ճշմարիտ կրօնական և հոգեկան կեանք չգտնելով՝ այնպիսի անձնափոփոխութեամբ գործ զրած զրգող բառեր է կարդում: ինչպէս որ երեկուայ Պէշչին իսկ այսօր Լեւոն ԺԳ-ը գործ է ածում: զոր օր՝ աղատամիտ և վիշացած տոհմեր ու անձնաւորութիւններ: գահ և տաճար թշնամանողներ: և այլն: ոչ նուազ զարմանալի է և այն, որ Պէշչին իւր նամակների զխաւոր նպատակ է դնում՝ քաղաքական լուրեր և ամեն տեսակ հոգովմեկան լամբասանքներ հաղորդելը: չեղանելով, թե իւր նամակների միջնորդութեամբ չի ուզում՝ ամբիայն սէր և մտերմութիւն արծարծել: վասն զի՝ միաբանութեան և համակրութեան մասին խօսելը՝ պարզապէս լոկ տղայամտութիւն է:

Վարժապետներն ու ինքը Պէշչին փափագում էին: որ սա պապական վարչութեան մէջ ծառայէ: Եւ երբ որ Պէշչին մեծ հոգսերից և ջանքերից յետոյ ապացուցեց, թե ինքը ազնուական ծագում ունի՝ 1832-ին կարողացաւ մտնել Accademia dei Nobili ecclesiastici, որ պապական բարձրագոյն ձեմարան էր քաղաքական և եկեղեցական իրաւագիտութիւն ուսումնասիրելու և պապական վարչութեան ու դիւանագիտութեան պաշտօններին պատրաստուելու համար: ձեմարանի խիստ կանոնները Պէշչին զգուար չթուեցան: նա ի մանկութենէ վարժուել էր աղատութեան և անկախութեան պահանջ չունենալ: Տոկուն աշխատութիւնն ու ժիր քննասիրութիւնը ձեմարանական 5-ամեայ ուսման տեղոյութեան ժամանակ ևս արգիւնաւորեցին Պէշչին համար պէսպէս պատիւներ: Բայց այս տեղ էլ հիւանդութեան կրկնութիւնները մեծա-

պէս խափանում էին կանոնաւոր ընթացքը: Մի հրապարակական վիճարանութեան յետաձգութիւնը մեծ հոգեւոր պատճառեցին նորընծային: «գործը այնքան նշանակութիւն ունի և այնպէս շահագրգիռ է, որ կարող էր մի անգամից իմ գրութիւնը փոխել: Այժմ վիճարանութիւնը բոլոր հոգեկան ոյժերով կատարուի և այս նիստը արտաբնական ևս փառահեղութիւն ստանայ, այլ ևս կասկած չկայ թէ այդ բանից ինչ ոգուաներ կարող են ծագել: Աւելացրու և այն թէ ինչպէս անունն էլ իսկոյն կը հռչակուի: Այս այս նիստը յամենայն դէպս գլուխ պիտի գայ որովհետեւ երբեք չեմ մոռանում, թէ այս առաջին քայլը պայծառ ասպարէզ է բաց անում իմ առաջ:» Այս իրօք արագ արագ բարձրանում է փոքր պաշտօններ և ստանում: Տիրանաւորների և եկեղեցական մեծամեծների պաշտպանութիւն է վայելում: աստիճանների կարգով ձեռնադրութեան է արժանանում: վարչական դիւանին մէջ է կարգւում: միւս կողմից հօրն է կորցնում: խղերի օրերումն է ապրում է գործում: մի խօսքով փորձառութեամբ կատարեալ մարդ դառաւ նա և կեանքի դժուարութիւնների մէջ այն հուժկու և գիտակցական տակտիկութիւնը ձեռք բերեց, որով յետոյ աւելի դժուարագոյն պաշտօններ քաջապէս կատարեց: Այս ժամանակներից նա գրում է: «Թէպէտ նորին Սրբութիւնից կարգուած գերապաշտանների մէջ կրտսերագոյնը ևս եմ: քայց և այնպէս ամենից աւելի գերադասուած եմ:» Այս հէնց որ 1838-ին ուսումն աւարտելուց յետոյ անմիջապէս հաստատուեց պաշտօնակալ դարձաւ և Բենեդեկտին առաքելական պատգամաւոր կարգուեցաւ: զմայլած գրում է: «Այս չէի կարող երագել մինչև այդ աստիճան բարձրանալու: ևս ոչ մի քայլ չէի արել այդ պաշտօնին հասնելու համար: Այս կատարուեցաւ միակամայն անակնկալ կերպով պապի ազատ կամքով, որ ինչպէս երևում է քաղցր ունքով է նայում վերաս:»

Այժմ Պէշէի զարգացման այս 6 տարուայ շարունակութիւնն էլ շրջահայեցեալ մենք կարող ենք երկու տեսակէտից նկատել՝ աստուածաբանի և դիւանագիտի զարգացման տեսակէտներից: Առաջին կէտի նկատմամբ տարակոյս չկայ, որ նորա եռանդն ու ջանքը առաջուայ պէս զօրաւոր կերպով էին գործում: մանաւանդ զարմանալին այն է, որ այդ ժամանակներում նա շատ էր հիւանդանում և բարոյական հարուածներ էր կրում: քայց չէր ընկճվում և հոգեւոր տոկոսնութիւն ու առաձգականութիւն էր պահպանում: Սակայն մենք դարձնալ չենք տեսնում, որ նորա հոգին աւելի զարգանար: նորա ուսումը աւելի ներքին արժանիք ստանար: նորա մտածողութիւնը աւելի ճոխանար և նորա բնաւորութիւնը կազմակերպուէր: 1837-ին նորա նամակները ցոյց են տալիս, որ նորա սիրտը խոր

շարժուել է քահանայական շնորհին արժանանալու ամբիւ: նա թէպէտ իւր նամակներում Աստուծոյ խնդրում է, որ «ս. քահանայագործութեան կոչումը լինելով ինձ զօրութիւն և համարձակութիւն տայ: որպէս զի բոլորքուած եռանդով և սիրով մերձենամ ս. Անդանի պաշտաման:» Բայց այս խօսքերը իւր սրտի ազատ բղխումը չէին ինչպէս որ առաջուայ ակնարկներից էլ կարող էինք մակարերել: այլ միայն ձգնական հրահանգների արհեստական արգասիք էին: որ ամենայն նորընծայ արտաքին խտտակրծնութիւնից ազդուած՝ միշտ արտագրում է: Իւր հոգեւոր կոչման համար այդչափ խոր զգացումը՝ այլ ևս չենք պատահում նամակների մէջ կրկնուած: ոչ առաջ և ոչ յետոյ: և ուրեմն ձեռնադրութիւնից մի քանի օր առաջ նորա անձնաւոր լինիլը՝ շատ հեշտ մեկնելի է գտնուում: Իւր ջերմեանդութեան ուղղութեամբ նա ինքն իրան ծանաղում է որպէս հարազատ աշակերտ ծիգուխուների: «Այս գրում է նա քառասունքի 14 օր խիստ ձգնութիւնից յետոյ, կամենում եմ ճշմարիտ քահանայ դառնալ, կամենում եմ Աստուծոյ սպասաւորել և ի փառս նորա եռանդեամբ գործել: և անկեղծօրէն կամենում եմ ծիգը այնպէս գործել: ինչպէս որ այդ հասկացել է ս. Բեդատիոսը (Աղոյւլան) և ինչպէս որ այդ հասկանում են նորա հոգեւոր զաւակները: որոնց ձեռքի տակ այժմ ապրելու շնորհ ունիմ:» Իւր ծիգուխական կարգը մտնելու ցանկութիւնը այնպէս է արտայայտում: «Եւ հիացումն ու հակումը դէպի հայր ծիգուխաները: որոնք որ իրանց կաթով ինձ մատող հասակից անուցել են: այնպէս է, որ ևս արդէն պատրաստ կը լինեի այդ կարգը մտնելու յօժարութիւնս յայտնելու: եթէ քացի յիշալ հակումից իմ մէջ նշմարէի նաեւ յատուկ կոչում: որ անհրաժեշտ է այդ ուխտի վիճակին արժանանալու համար:»

Այժմ աստուածաբանի հոգեկան վիճակի մասին ուղղակի շատ բան չենք գտնում նամակների մէջ և նմապրութիւններ միայն պիտի անենք նորա ջերմեանդութեան խորութեան մասին: այդ բանի փոխարէն դիտեցեալ Պէշէի հոգեկան վիճակը ամենաստույգ կերպով պատկերանում է իւր նամակներում: Անշուշտի երևում է որ նա ծարաւում է առաջնալ և բարձրանալ կեանքի սանդուխտով և տոհմի փառքն ու մեծարանքը աճեցնել, որ անշուշտ շատ ու քիչ աշխարհային շարժառիթ է մի հոգեւորականի զգեստի տակ: Իւր նպատակներից ոչ մէկի մասին այնպէս պարզ չի խօսում նա: քան այս մասին: «Եւ դիտաւորութիւնն է:»—գրում է նա 1837-ին իւր կղբորդ—«մեծաւոր եկեղեցականների ասպարիդի մէջ մտնել: Առողջ դատողութիւնս և ինքնին ընդառաջող բարեկալնող դէպքը՝ ինձ մասնացոյց են անում այդ ուղղութիւնը:» Այս

չեմ՝ կասկածում, թէ դու քո խոհանութեամբ
և յաւետ ցանկութեամբ, որ մեր տոհմի փառքը
բարձրանայ՝ կը գոյնս իմ վճիռը . . . Եւորին
Սրբութեան բարեհաճ շնորհիւ ես այժմ մի նոր
ճանապարհի վերայ եմ, ուր որ իմ բոլոր զօրու-
թեամբ պիտի աշխատեմ, որ տոհմիս ըղձերի և
զրութեան համեմատ վարուիմ և ըստ ամենայնի
նպատաւորեմ նորա պատուի և փառքի աճեցման։
Այնուպէս պայծառութեամբ և վիսպում մի այլ նա-
մակ նշնայեալ 1837-ին գրած, թէ ինչպէս զօրա-
ւոր է եղել Պէշչիկի անափառութիւնը, նորա առաջ
մղուելու ձգտումը, և թէ ինչ երկրորդական տեղ
է ունեցել նորա «Տօգեօրական կոչման» կամ աստ-
ուածարանական ուսմամբ ոգևորուելու փոյթը։ Սո-
վորութիւն ունենալով իմ վիճակիս մասին ազգա-
կաններէիցս ոչինչ չթաղցնելու, տեկեղծօրէն հա-
ւատացնում եմ քեզ, որ այն օրումնից, երբ ես
հօրս ցանկութեան համեմատ այս նոր ասպարիզիս
մէջ ոտք կոխեցի, միշտ հետամուտ եմ եղել միայն
մի նպատակին. ես ուզեցել եմ իմ բոլոր զօրու-
թիւններովս քանազ և գովելի վարքով ընթանալ,
որ նուիրապետական աւագութեանց աստիճաններով
առաջ գնամ և ընդ նմին նաեւ մեր տոհմի արժա-
նեաց յարգը աւելի ևս բարձրացնեմ, և թէ այս
նպատակիս հասնեմ, կարճեմ, թէ մեր հօր խոր-
հուրդների համեմատ գործած պիտի լինիմ։ Եւ յի
խորհուրդները ինձ համար օրէնք են և անշուշտ
խիղճս տաղնապի մէջ կը լինի, եթէ կենացս մէջ
երբ և իցէ անոնց դէմ մեղանշեմ։ Բայց քանի
երեստասարդ եմ, անտարակոյս իմ առջև զճառ աս-
պարէզս այնպէս կընթանամ, որ կարողանամ մեր
տոհմի պատիւը շահել, եթէ ի հարկէ վարքս ան-
բիժ մնայ և զօրաւիգն պաշտպանութիւն փայլեմ,
որ ինչպէս ինքզ զիտես, Հոգիմում երկու անհրա-
ժեշտ պայմաններ են՝ անսայթաք և արագ արագ
բարձրանալու համար։

Ահա այս է Պէշչիկի անձնաւորութեան, կե-
նաց և ձգտման ստոյգ պատկերը, ինչպէս որ այդ
ձևանում է իւր փաղաքոյն նամակներէից։

Ս. Ս.



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

GRÉGOIRE DE TOURS-ի ՄԵԿ ԳԼԽՈՒՆ ՎԵՐԱՅԻ
ԱՐԵՒԵԼԻՔԻ ՊԱՏՄԱՌԻՔԵՆ ՄԱՍԻՆ.

Փարիզի Բարձրագոյն Ուսմանց Վարժա-

րանի այս տարուան տարեցոյցը * կը պարու-
նակէ պայպիտի վերնագրով հատուած մը. Sur
un chapitre de Grégoire de Tours relatif à l'his-
toire d'Orient: Եօդուածը՝ որ կը կրէ ծանօթ
բանասէր A. Carrière-ի ստորագրութիւնը, կը
պարունակէ վեց էջ քննութիւն մը հայոց ա-
պստամբութեան ընդդէմ պայքից՝ յամին 571:
Նոյն տարեցոյցը լինելով համալսարանին և
համալսարանի աշակերաններուն յատուկ մաս-
նական զիրք մը, ի հարկէ նոյն բանասէրին յօ-
դուածն անծանօթ պէտք է մնայ հայ բանա-
սիրական շրջանին, ուստի յարմար գտանցի
նոյնը թարգմանութեամբ ծանօթացնել Եօ-
դուածը կսկսի այսպէս.

«Grégoire de Tours իր Փրանկներու պատ-
մութեան մէջ (Histoire des Francs) գրած է մի
քանի տեղեկութիւններ իր զանդական կայս-
րութեան մէջ իւր ժամանակ պատահած
անցքերու մասին։ Նա կը պատմէ կարեւոր
դէպքեր՝ քիչ կամ շատ մանրամասնութեամբ,
բայց առանց երբեք շարունակեալ պատմու-
թիւն մը ընելու։ Իր պատմութիւնը միշտ
հատուածական, մասնական և փայտկան գոյն
ունի. շատ հոգ չառնիր դէպքերը ժա-
մանակագրական ամբողջութեան մը մէջ մը-
ցնելու։ Իր առում տեղեկութիւնները միշտ
թանկացին են, որովհետեւ այն դէպքերուն
շատ մօտիկ ժամանակի մը մէջ գրուած են
Խնդիր է թէ այս տեղեկութիւնները սալոյց
են։ Այս մասին քննադատութիւնը երբեմն
բաւական խիստ գտնուած է, ինչ կը թուի
թէ Գրիգորի հեղինակութեան պաշտպանե-
րը խնդրին այս կողմը ի գոյր անոր դատա-
փետներուն թողած են։ Հետեւեալ տպերով
չեմ համարձակիր բնաւ խնդրին վճռական
լուծում տալ, բայց Փրանկոց պատմու-
թեան մէկ գլխուն տեսակ մը մեկնութիւն
կցելով, կը յուսամ թէ պիտի կարենամ ցուց-
նել, թէ ինչ տեսակէն գործածուած աղբիւր-
ները յայտնել անոնց ծագումը, որով կարելի
կրկնի գնահատել անոնց արժէքը։ Նոյն աշխա-
տութիւնը կատարելով ուրիշ գլուխներու հա-
մար՝ զորոնք համառօտ պիտի ամփոփեմ

* Annuaire de l'Ecole Pratique des Hautes-Etudes, 1898. էջ 5—23.